ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2010 թվական N _____ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ՝ ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱՋԻԲԱՋ» ՀԱՆԴԱՄԱՍԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող «Աջիբաջ» հանդամասի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման՝ համաձայն հավելվածի, պետական սեփականություն հանդիսացող՝ 42.95 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ ընդերքօգտագործման նպատակով։

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին՝

սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերը 3 տարվա ընթացքում նպատակային նշանակությամբ չօգտագործելու դեպքում սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ՝ ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱՋԻԲԱՋ» ՀԱՆԴԱՄԱՍԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան հողերի նպատակային նշանակության փոփոխությունը կատարում է ՀՀ կառավարությունը՝ հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա։

ՀՀ Սյունիքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող «Աջիբաջ» հանդամասի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված է պետական սեփականություն հանդիսացող՝ 42.95 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ ընդերքօգտագործման նպատակով։

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված սխեման ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել հողային օրենսգրքի /մասնավորապես 6-րդ, 7-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 57-րդ և 64-րդ հոդվածների/ պահանջներին համապատասխան և ՀՀ կառավարության 2001 թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» N 30 որոշման 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված կարգով։

Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա հողերի կատեգորիան փոխելու մասին ժամանակավոր սխեման համաձայնեցվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, բնապահպանության, էներգետիկայի և բնական պաշարների,

մշակույթի նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, իսկ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը չի համաձայնեցնում 45.95 հեկտար հողերի նպատակային նշանակության փոփոխումը:

Հողերի կատեգորիան փոխելու մասին համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի վերաբերյալ առկա են մարզպետի որոշումը, մարզային հանձնաժողովի եզրակացությունը:

Հողերի օգտագործման ժամանակավոր
սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական
հանձնաժողովի նախագահ **Վ. Տերտերյան**